ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱԶԻԼԻԿԱՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

ՊԱՈԼՈ ԿՈՒՆՆՈ (Հռոմ)

Մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող երկու կառույցները հայտնաբերվել և չափագրվել են 1970 թ. Հռոմի համալսարանի հանձնարարությամբ Վանի շրջանում կատարված գիտահետազոտական աշխատանքների ժամանակ։

Ինչպես պիտի ավելի մանրամասնորեն տեսնենք, այս երկու, առանց գմբեթի բազիլիկաները, ամենայն հավանականությամբ V—VI դարերի գործեր են։ Հետևաբար, նկատի առնելով այդ տիպի շենքերի փոքրաթիվ լինելը այդ շրջանում, հասկանալի է դառնում ստացված արդյունքների նշանակությունը հայկական ճարտարապետության, քրիստոնեական ու ընդհանրապես արևելյան վաղ շրջանի արվեստների պատմության համար։

Երկու բազիլիկաներն ունեն նույն տիպաբանական, ճարտարապետական ու ոճական հատկանիշները։ Նրանք տեղադրված են Դատվանի շրջակայքի (Բիթլիսի վիլայեթ) իրարից ոչ հեռու ընկած գյուղերում, Վանա լճի հարավարևմտյան ափերի մոտակայքում, Արևելյան Տավրոսի կամ պատմականորեն Հայկական Տավրոս կոչված լեռնաշղթայի հյուսիսային սարալանջերի վրա։

Դատվանի բերքառատ դաշտավայրը, որ գտնվում է 1800 մ բարձրության վրա, երկարում է դեպի Վանա լճի արևմտյան ափերը, իսկ հյուսիսային ուղղությամբ հասնում է մինչև ամբողջ շրջակայքի վրա իշխող Նեմրութ հրաբուխը։

Դատվանը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Արևելյան Թուրքիայի կարևոր հանգույցներից է. այստեղով են անցնում Էրզրումից, Մուշի վրայով Էլազիկից, Դիարբեքիրից Բիթլիս և դեպի Վան կամ Պարսկաստան տանող ճանապարհները։ Դատվանից կարելի է հասնել լճի հյուսիսում գտնվող Ախլաթ, Ադիլջևազ, Էրշիս կենտրոնները և Ագրիից կապվել Եվրոպան Ասիային միացնող տրանսանատոլյան ուղուն։

Երկու գյուղերից Թուզը (այսօր Կաիլիյան) գտնվում է Դատվանից 10 կմ արևելք և կարելի է հասնել նոր խճուղուց թեքվելով 2 կմ հյուսիս, դեպի Գուղել-դերե (անցյալում Թուղագետի) ձորը։

Փաշվանց (այսօր՝ Փաշա էլմալի) գյուղը գտնվում է Դատվանից 20 կմ արևելք, լճի փոքր ծոցի մոտակայքում, ուր կարելի է հասնել Դատվան-Վան խճուղուց դեպի հյուսիս ճյուղավորվող ճանապարհով։

Կառույցների ճարտարապետական կերպարը

Ա. Թուղի բազիլիկան

Այսօր դա գտնվում է գյուղ տանող ճանապարհի մոտ ընկած մի այգում։ Արտաքին ծավալը նման է ձգված խորանարդի ու ենթադրել է տալիս, որ երկ-

թեք ծածկ է ունեցել։ Այդ ծավալը ամբողջությամբ այլակերպված է. պակասում են ծածկի սալերը, տեղահան է եղել արտաքին երեսապատման մեծագույն մասը, հատկապես՝ հարավի, արևմուտքի և արևելքի ճակատներից։

Միանավ եկեղեցին պարզ բազիլիկա է, գլխավոր առանցքից շեղված խորանի ավելի լայն մասում տեղադրված է երկհարկ ավանդատունը, ուր կարելի է մուտք գործել կենտրոնական սրահի կողքի՝ որպես նախամուտք ծառայող լայնացումից։ Բազմակաղմ այս տարածությունը արտաքինից կատարելապես քառանիստ է և պարփակված երկարաձիգ խորանարդի մեջ։ Բազիլիկան ունի հետևյալ արտաքին չափերը՝ 12,75×8,40 մ, մոտավոր բարձրությունը՝ 6 մ։

Անցնենք եկեղեցու նկարագրությանը.

ա) Արևմտյան ճակատ.

Գլխավոր մուտքի վերևի և նրանից ձախ ներքևի հատվածներում պահպանվել են սրբատաշ մեծ չափերի սալեր ու կարելի է ենթադրել, որ բուն երեսապատումից մնացած քարերն են։ Իսկ ձախ և աջ անկյունների կենտրոնական մասերում տեղադրված ավելի փոքր չափերի սալերը ցույց են տալիս հետագայում արված վերակառուցումները։

Գլխավոր մուտքի աջակողմյան ճակատը և նրա վերևի ամբողջ մակերեսը զուրկ է երեսապատումից։ Հստակորեն տեսանելի է անտաշ, շաղախով ամրացված մեծ քարերից կազմված պատի միջուկային շերտը։

Դռան վերևի մասում, առանցքից շեղված, կա երկարաձիգ, նեղ պատուհան, որի դիրքը և սեմերը ցույց են տալիս նրա հնությունը, բնիկ կերպարը։ Իսկ ավելի վերևի լայն բացվածքը, անշուշտ, հետագայում է արվել։

բ) Հարավային ճակատ.

Եկեղեցու այս մասը շատ ավերված է և ինչպես արևմտյան ճակատում, ներքևի մասում տեսանելի են ավելի հին՝ մեծ սալերով պատի բուն շարվածքը, իսկ վերևի մասերում՝ երեսապատումից զուրկ հատվածներ, կամ հետագա վերանորոգումներից մնացած փոքր սալերով շարվածքը։ Պատի աջ եզրը փլատակ է, դեպի ձախ շեղված վարի մասում կա երկրորդական մուտք, առանց զարդերի արխիտրավով։ Դռան սեմերի և արխիտրավի վրա փորագրված են խաչեր, իսկ արխիտրավի վրա կա ոչ հին արձանագրություն։

գ) Արևելյան ճակատ.

Մյուսների համեմատությամբ այս ճակատը ամենաավերվածն է, այլևս գոյություն չունի խորանի ձախ կողմում գտնվող երկհարկ ավանդատների արտաքին պատը։ Դրա հետևանքով կարելի է տեսնել, թե ինչ է մնացել թաղի ներքին պատերից։ Այսպես, տեսանելի է վարի ավանդատունը եկեղեցուն կապող դուռը, իսկ երկրորդ հարկի մուտքը չկա։ Սակայն պետք է որ գոյություն ունեցած լինի մուտք, պարզ այն պատճառով, որ փոքր սենյակի պատերի սալերը սրբատաշ են և բավական կանոնավոր կտրված։

Ճակատի երեսապատումը ևս մեծ մասամբ փլված է, մնում են, ինչպես մյուս ճակատներից, ներքևի շարքերը, շարված նույն չափերի քարերով։ Հետևաբար պատկանում են սկզբնական շրջանին։

Խորանի պատուհանը բացված է եկեղեցու գլխավոր առանցքից բավական աջ գտնվող, երեսապատումից զուրկ մակերեսի վրա։



Նկ. 1. Թուղի բազիլիկայի արևմտյան ճակատը



Նկ. 2. Թուղի բազիլիկայի արևելյան ճակատը

Վերևի մասը շատ է քայքայված, իսկ մեջտեղի մասի թեթևակի բարձրացումը թելադրում է, թե ինչպիսին է եղել երկթեք տանիքի եզրագիծը։

դ) Հյուսիսային ճակատ.

Այս ճակատի արտաքինը պահպանված է գրեթե լրիվ՝ մինչև որոշ բարձրություն։ Սակայն պատի շարվածքը պատկանում է, ինչպես տեսանք մյուս ճակատների համար, վերանորոգման շրջանին։ Այս ճակատը զուրկ է բացվածքներից։

ե) Ներքին տարածություն.

Եկեղեցու ներսը (որ ներկայումս օգտագործվում է որպես խոտի ամբարանոց) միանավ, աբսիդով մեծ հենակամարով գրեթե իրար հավասար երկու մասերի է բաժանված։ Նավի տարածությունը սիմետրիկ չէ և ձգվում է դեպի աջ (եկեղեցին մտնողի համար), մուտքին կից երկու ոչ խոր, գլխավոր թաղը հատող ուղղությամբ կապված ցածր թաղերի տակ, որոնք հենվում են պատից դուրս եկող, միաժամանակ նավը երկու հատվածների բաժանող հենակամարը կրող որմնասյան վրա։ Հետևաբար, սրահի թաղը մի կողմով ուղղակի հենվում է հյուսիսային պատի վրա, իսկ հանդիպակաց կողմով՝ երկու ցածր կամարների վրա։

Սրահից ավելի նեղ, պայտաձև աբսիդը առանցքով չի դրված, հետևաբար աբսիդի գլխավոր կամարի կենտրոնը չի համընկնում սրահի թաղի կենտրոնի հետ։ Առանցքի նման շեղումի նպատակն է եղել շենքի նույն ծավալի մեջ հնարավոր դարձնել աբսիդին կից ավանդատան տեղադրումը, ուր կարելի չիներ մուտք գործել հարավային պատին հպած նեղ դռան միջոցով, որը բացվում է երկու ցածր թաղերից մեկի միջով։

Առաջին հարկի ավանդատունը երկուսից ամենացածրն է և արևելյան պատը փլված լինելու պատճառով տեսանելի է դրսից։

Վերլուծելով ճարտարապետական և ոճական հատկանիշները, կարող ենք եզրակացնել, որ՝

— գլխավոր թաղը մեջտեղում թեթևորեն սրածայր է ինչպես և բոլոր կամարները, որոնք նաև պայտաձև են և հենման կետում մի քանի սանտիմետր դեպի ներս են լայնացած.



Նկ. 3. Թուղի բազիլիկայի հատակագիծը

Նկ. 4. Փաշվանդի բազիլիկան տեսքն արևմուտքից



Նկ. 5. Փաշվանցի բազիլիկայի որմնամույթի խոյան

— այս տարրերը, որոնք առավել կամ պակաս հողմնահարված են, «արխաիկ» շրջանի պրոֆիլ ունեն՝ պայտաձև կամարի սկզբնական հատվածը շեշտված ներս ընկած կորությամբ կռթնած է ուղիղ հատվածի վրա.



Նկ. 6. Փաշվանցի բազիլիկայի հատակագիծը

— աբսիդի գլխավոր կամարը կրող որմնասյուների անկյունները սուր չեն, այլ կլորացած.

— աբսիդի գլխավոր կամարի վերևի մասում կա կլոր քար, որի վրա, հավանաբար, քանդակված էր ատամնավոր զարդերի շրջանակի մեջ առնված խաչը։ Այդ զարդերը այսօր ջնջված են.

— աբսիդի պատուհանի բացվածքը արխաիկ շրջանին բնորոշ լայնացում ունի դեպի ներս.

— ներսի պատերի վրա քանդակված են ավելի ուշ շրջանի խաչեր.

— ներքին պատերի երեսապատումը լավ է պահպանված և թվում է, որ վերանորոգումների չի ենթարկվել.

Ամբարված խոտի պատճառով չկարողացանք տեսնել հատակը, ուր գուցե լինեն զարդեր և արձանագրություններ։

Բ. Փաշվանցի բազիլիկան

Տեղադրված է փոքր բարձունքի վրա, արտաքինից երկարաձիգ խորանարդի ձև ունի, ծածկը երկթեք է, և տանիքի սալերը մեծ մասամբ պահպանված են։ Արտաքին պատերի կազմում մաս-մաս դեռ գոյություն ունեն մեծադիր, սրբատաշ, կանոնավոր սալեր։ Տեսանելի են վերակառուցման և վերանորոգումների հետքեր. դրանք, սակայն, ինչպես կարելի է տեսնել եկեղեցու ներսում, որը լավ է պահպանված, չպետք է որ ազդած լինեն նրա ամբողջականության վրա։

Կատարելապես սիմետրիկ, միանավ այս բազիլիկան ընդերկայնական ուղղությամբ կազմված է եղել իրար հաջորդող հինգ հավասարաչափ մասերից, որոնք արևելյան կողմում վերջացել են պայտաձև, խոր աբսիդով։ Նրա կողերին եղել են քառանկյունի մեկական ավանդատներ։

Բազիլիկայի երեք հատվածները քանդվել են կա՛մ երկրաշարժի, կա՛մ ավերումների հետևանքով։ Արևմտյան ճակատը, ուր բացվում է միակ դուռը, ամրապնդված է, այդ աշխատանքները, հավանաբար, տարվել են դեռ կանգուն մնացած միակ հատվածը փրկելու նպատակով։

Անցնենք արտաքին ճակատների նկարագրությանը.

ա) Արևմտյան ճակատ

Կառույցի այս հատվածի (որի վրա կուտակված են փլած պատերի կույտերը, աջ կողմում կա հարդով ծածկված տանիք և տեսանելի են վերանորոգման աշխատանքներ) ծայրամասերում կանգուն են մնացել երրորդ հատվածը չորրորդից բաժանող որմնասյուները։ Ձախ կողմի որմնասյան վրա հենված կամարի առաջին քարը զարդարված է խորաքանդակներով և ավելի ուշ շրջանում որոշ ազատությամբ հավելված այլ զարդերի հետ կազմում է պատերի հարդարանքը։ Այս կամարաքարը ունի վաղ շրջանը բնորոշող ձգված կորությամբ պրոֆիլ։ Մեջտեղի մասում քանդակված է շրջանակի մեջ առնված վարդերի և շուշանների հյուսվածք։ Աջ կողմում կա թևերը բացած, գլուխը ժապավենով փաթաթված թռչունի խորաքանդակ։ Թռչունը ճանկերի մեջ բռնել է ալիքաձև ժապավեն, որի վերջին մասը ուղիղ է և եռանկյունի կտրված։ Զարդերի միջև ընկած տարածությունը փորագրված է բուսական մոտիվներով։

Բազիլիկայի մուտքի կամարակալ միակտոր քարն ունի ուշ շրջանի երկար արձանագրություն։

Մուտքի դռան վերևը, բավական բարձր դիրքով, կա փոքր, նեղ բացվածքով մի պատուհան։ Նրա վրա դասավորված է կիսաշրջան վերջավորությանը համակենտրոն երեսակալ, զարդարված շոջանակների մեջ առնված երեք խաչերի մոտիվով։ Տեսանելի են անընթեռնելի դարձած արձանագրության հետքեր։ Երեսակալը տաշված է միակտոր քարից և բացահայտ է, որ պատկանում է վերակառուցման շրջանին, իսկ նրա վրա ամրացված, խոյակի կերպարով քանդակված մյուս քարի ձևը, գծագրական թեման անշուշտ ավելի հին են և պետք է որ խոյակը պատկանած լինի շենքի սկզբնական շրջանին։ Խոյակի հարդարանքը ունի հետևյալ թեման՝ երեք շարքի վրա փորագրված շրջանակներ, որոնք իրար են հատում ու առաջացնում նուշի ձև ունեցող մակերեսներ, որոնց մեջ պարփակված են ութ թերթիկներից կազմված վարդեր։

Պատի վրա տեսանելի են ուրիշ խաչեր, ոմանք շատ պարզ, մյուսները՝ ավելի մշակված։ Խաչերը փորագրված են պատի հին և ավելի նոր քարերի վրա։ Պատն ավարտվում է սկզբնական քիվից մնացած, դուրս ընկած քարերի շարքով։ Տանիքի նմանությամբ, քիվը երկթեք է, ծայրամասերում ունի հորիզոնական հատվածներ, որտեղից սկիզբ են առնում հյուսիսային ու հարավային պատերի քիվերը։ Աջ մասի ներքևում տեսանելի են մի այլ քիվի հետքեր։

բ) Հարավային ճակատ

Այս ճակատի պատը զուրկ է որևէ բացվածքից։ Պատը բաժանված է երեք հորիզոնական հատվածների։ Ներքևի գոտին շարված է կանոնավոր տաշված մեծադիր քարերից, որոնցից շատերը տեղահան են արված, և բաց մնացած տեղերից երևում է պատի միջուկային շերտը։ Միջանկյալ գոտու սալերը փոխարինված են անկանոն կտրված քարերի կտորներով, իսկ ամենավերևի գո-

տին, որը լավ է պահպանված, շարված է կանոնավոր կտրված, ոչ մեծ սրբատաշ քարերից։

գ) Արևելյան ճակատ

Եկեղեցու այս մասը համեմատաբար լավ է պահպանված, բայց շարվածքը միակազմ չէ. պատի որոշ քարեր փոխարինված են, կան նաև հետագայում ամրացված զարդաքանդակներ։

Հատկապես ներքևի մասը շարված է մեծ չափերի քարերից, որոնց վրա փորագրված են շրջանակների, քառակուսիների և եռանկյունիների մեջ առնված մեծ խաչեր։ Հորիզոնական դիրքով շարված այս քարերը իրականում, հատուկ տիպի «խաչքարեր» են, որոնց վրա խաչի մոտիվը քանդակված է շրջանակի վերևի կամ ներքևի մասում, իսկ շրջանակների մեջ քանդակված է մի երկրորդ խաչ։ Հավանական է, որ սրանք սկզբում կանգնած դիրքով ամրացված խաչքարեր են եղել։ Խաչքարերի վրա կան պարզ տառերով արձանագրություններ։

Ճակատի տարբեր բարձրությունների վրա բացված է երեք պատուհան, որոնք համապատասխանում են աբսիդին և երկու ավանդատներին։ Կենտրոնական պատուհանի կամարակալը մշակված է ատամնավոր շրջանակի մեջ առնված երկրաչափական զարդամոտիվների հյուսվածքով, որի մեջտեղում արված է մի վարդյակ։

Ինչպես նկատել էինք արևմտյան պատի համար, այստեղ էլ հետագայում պատը բարձրացրել են մոտավորապես մեկ մետրի սահմաններում։

դ) Հյուսիսային ճակատ

Այս պատի վրա չկան սրբատաշ, կանոնավոր քարեր, բացառություն են կազմում ամենավերևի հատվածը և ձախ անկյունը, որոնք շարված են սկզբնական շենքին պատկանող մեծ քարերով։ Պատի մնացած մասերը կազմված են քարի կտորների անկանոն շարքերից։

Մյուս ճակատների բարձրությամբ ընթացող քիվից ներքև, պատի ձախ հատվածում դեռ գոյություն ունեն ավելի վաղ շրջանի քիվի մնացորդները և, ինչպես ասացինք, նրա վրա հետագայում ավելացրել են պատի նոր շերտը։

Այս ճակատի մաս էր կազմում այսօր եկեղեցու բարձրությամբ դիզված հողի տակ գտնվող պատը, որի մեջ բացվում էր հուշարձանի երրորդ հատվածի առանցքով տեղադրված բազիլիկայի մուտքը։ Որոշ դժվարություններ հաղթահարելով, կարողացանք վերջապես դռան բարավորը ծածկող հողը հեռացնել։ Բարավորը միակտոր քարից է, բաժանված երեք հատվածների՝ ատամնահյուս պարանով։ Ազատ մակերեսները քանդակազարդված էին, այսօր դեռ տեսանելի են քանդակների հետքերը, որոնց մոտիվները, սակայն, լրիվ ըմբռնելի չեն։ Մեջտեղի հատվածում հավանաբար եղել է ատամնավոր շրջանակի մեջ առնված մեծ խաչ, իսկ ձախ մասում նշմարելի է մեծ ականջներ ունեցող կենդանու կերպարը։

ե) Ներքին տարածություն

Մեր նկարագրությունը սկսելուց առաջ հարկ է նշել, որ արևմտյան ճակատին հանդիպակաց հատվածի պատերի փլատակները և որոշ այլ տարրեր մաս էին կազմում այսօր քանդված հուշարձանի առաջին երեք հատվածների, որոնց շարունակությունն են դեռևս գոյություն ունեցող մյուս երկու հատվածները։ Ինչպես նշեցինք, վերջին հատվածի հյուսիսային պատի մի մասը կան-

գուն է, իսկ մյուս երկուսի հատակը փոքր-ինչ բարձր է և դժվար չէր լինի փորել և բացել եկեղեցու ամբողջ հատակագիծը։

Բազիլիկայի մինչ օրս պահպանված մասը կազմված է երկու հատվածներից, որոնց ներքին տարածությունը կարող է զետնահար թվալ, սակայն տպավորիչ է ու միասնական։ Ներսը լավ է պահպանված, սակայն բոլոր մակերեսները ծածկված են ծխից առաջացած մրի հաստ շերտով։

Ի տարբերություն Թուղից, ներքին տարածությունը կատարելապես սիմետրիկ է՝ արևելք-արևմուտք առանցքի երկայնքով. թաղի կիսաշրջանը համակենտրոն է աբսիդի հետ և կողքերի լայնացումների խորությունը նույնն է։

Սրահի թաղը թեթևորեն սրածայր է, ինչպես և երկու հատվածները բաժանող ավելի դուրս ընկած հենակամարը և աբսիդի կամարը, մինչդեռ սրահի կողերի երկայնքին ընդլայնական ուղղությամբ բացվող լայնացումների կամարները կատարյալ կիսաշրջանակաձև են։

Բոլոր կամարները հենված են ձգված կիսագլանի և կոնի վերջավորություն ունեցող հենաքարերի վրա. դրանցից շատերը զարդարված են քանդակներով, որոնց մոտիվը, ի տարբերություն արևելյան ճակատի զարդերի, երկրաչափական է։ Որմնասյուների խարիսխները ևս ծածկված են երկրաչափական պարզ հարդարանքով։

ДВЕ НОВОНАЙДЕННЫЕ БАЗИЛИКИ РАННЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ В ВАСПУРАКАНЕ

ПАОЛО КУНЕО (Рим)

(Резюме)

Группа сотрудников Института средневековых искусств Римского университета в августе 1970 г. во время научной экспедиции на территории исторической Армении обнаружила и исследовала два сооружения раннего средневековья, находящихся на юго-западном берегу озера Ван, в деревнях Туг и Пашванц (ныне Паша Элмали).

Эти сооружения являются одними из древнейших в Васпуракане. Их наличие в данном районе подтверждает факт существования здесь уже в раннем средневековье развитой архитектуры.

Оба сооружения являются однонефными базиликами и принадлежат к своеобразному варианту этого типа. Своей композицией они схожи с дворцовой базиликой в Ани и Цранавор в Парби. В базиликах Туга и Пашванца в вытянутой зальной части устроены мощные пилоны, выступающие из продольных стен и образующие глубокие, прямоугольные в плане ниши. Последние перекрываются отдельно широкими арками, на которые и опирается свод перекрытия сооружения. В дальнейшем элементы такой композиции были использованы при создании более сложных архитектурных организмов, как, например, «купольных залов» (Птгни, Аруч).

На базиликах нет строительных надписей. Однако техника кладки стен и архитектурные детали (базы, капители, орнаменты) характерны для памятников армянской архитектуры раннего средневековья (Текор, Ереруйк), на основании чего их можно датировать V—VI вв.